ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԲՂՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի 27-ին Սինոդը լուծեց Նուշի քաղաքի բնակչուհի Հեղինէ Յակովբեանի պսակը Կարապետ Սիմէոնեանցի հետ վերջնիս անյայտ բացակայելու պատճառով և իրաւունք տուաւ Հեղինէին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը մերժեց լուծել Ղորղանեան ամուսիններուի պսակը և վերադարձնելով գործը Աստրախանի վիճ. Կոնսիստորիային, պատուիրեց յորդորել և հաշտեցնել նրանց։

Նոյն թուին Սինոդը որոշեց երկու շաբաթուայ ապաշխարութեան ենթարկել Գարեգին քահանայ Առաքելեանցին հայ կաթոլիկի կնքահայրութեամբ երեխայ մկրտելու պատճառով։

Յունիսի 1-ին Սինոդը թոյլ տուեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Սպիտակ գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր Յարութիւնեան Պողոսեանին և ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ։

Նոյն թուին թոյլատրուեց Շամախու Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունել Դարբանդ քաղաքի բնակիչ Ալլահ Կուլի Հաջար Կուլի օղլուն։

Յունիսի 8-ին Սինոդը թոյլ տուաւ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևորականութեան մէջ Գիւլափլի գիւղի բնակիչ Սեդրակ Տէր Գէորգեանին և ձեռնադրել նրան քահանայ Սպիտակ գիւղի վրայ, իսկ Աղէքսանդրապոլի գաւառի Ղօնախղռան գիւղացի Պողոս Յարութիւնեան Պապիկեանցին՝ նոյն գիւղի ժողովրդեան վրայ։

Յունիսի 10-ին Սինոդը թոյլատրեց ընդունել հոգեւորականութեան մէջ Ախալքալաքի գաւառի Զամդուրա գիւղի բնակիչ Վարդ-Յարութիւն Տէր Սուքէնեան Աղնաուրեանցին և ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային ծախսել 90 ռուբլի թեմական տեսչի սենեակների նորոգութեան համար։

Յունիսի 22-ին Սինոդը լսեց Երեւանի շրջանական դատարանի Պրօկուրօրի գրութիւնը յունիսի 8-ից № 306, որի հետ ուղարկելով Թիֆլիզի դատաստանական պալատի վճիռը 1904 թուի սեպտեմբերի 21-ից, խնդրում է Սինոդի տնօրինութիւն երկու ամսուայ ընթացքում կարգալոյծ անելու Կարս քաղաքի երկու քահանաներին՝ Տէր Առաքել Տէր Առաքելեանցին և Տէր Դիոնիսիոս Տէր Մինասեանցին, որոնք զրկուած են մի քանի իրաւունքներից և դատապարտուած միամեայ բանտարկութեան։ Դատաստանական պալատի վճռից երեւում է, որ յիշեալ քահանաներն այլոց հետ միասին մեղադրուած և դատապարտուած են պատժական օրինաց 263 դ. յօդուածի համաձայն։ Հրամայեցին. ուղարկելով վճռի պատճէնը, պատուիրել Երեւանի վիճակային Կոնսիստորիային կարգալոյծ անել յիշեալ երկու քահանաներին և տեղեկութիւն տալ Սինոդին։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուաւ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգեւորականութեան մէջ ընդունել Շուշուայ գաւառի Ծակուռի գիւղի բնակիչ Մելքսէթ Տէր Գրիգորեան Տէր Մարտիրոսեանցին և ձեռնադրել քահանայ Ջրակուս գիւղի վրայ։

Յունիսի 27-ին Սինոդը լուծեց Լեւոն և Բերտա Ծըրդնաւորեանցների պսակը և թոյլատրեց Բերտային նորէն ամուսնանալ, զրկելով Լեւոն Ծղնաւորեանին նոյնպիսի

իրաւունքից, որի մասին հրամանագրեց Շամախու Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը լուծեց Մծարա գիւղի բնակչուհի Արզուքա Զագրեանի և Կարապետ Զագրեանի պսակը՝ վերջինիս անյայտ բացակայելու պատճառով և իրաւունք տուաւ Արզուքա Զագրեանին նորէն ամուսնանալու։

Յունիսի 29-ին Սինոդը լուծեց Գանձակի գաւառի Փիր գիւղի բնակիչ Սարգիս Խօջայեանի և Գոզալ Աւագեանի պսակը կնոջ անհաւատարմութեան պատճառով և թոյլ տուաւ Սարգսին նորէն ամուսնանալ։

Նոն թուին Սինոդը լուծեց Գրիգոր Խօջամիրեանի պսակը Սրբուհի Հայրապետեանի հետ՝ Գրիգորի անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Սրբուհի Հայրապետեանին նորէն ամուսնալու։

Նոյն թուին Սինոդը լսեց Ներքին Գործոց Նախարարութեան օտար դաւանութեանց դէպարտամէնտի գրութիւնը յունիսի 13-ին — № 2886, որով պահանջում էր տեղեկացնել, թէ վերջին հինգ տարուայ ընթացքում տարեկան քանի հոգի են սովորել թեմական դպրանոցներում, քանի հոգի են աւարտել իրենց ուսումը յիշեալ ժամանակի ընթացքում, աւարտողներից քանի հոգի են մտել հոգևոր ծառայութեան մէջ, յիշեալ հինգ տարիների ընթացքում սրբազնագործ պաշտօնեաների քանի՞ բաց տեղ է եղել իւրաքանչիւր թեմում և այդ տեղերից քանիսն են բռնուել յիշեալ ժամանակի ընթացքում և մինչև օրս քանի բաց տեղ է մնում։ Սինոդը հրամայեց ուղարկել Ներքին Գործոց Նախարարութեան գրութեան պատճէնը թեմական առաջնորդներին և շուտով ստանալ պահանջուած տեղեկութիւնները՝ նախարարութեան մատուցանելու համար։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Աստրախանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Ղզլարի

բնակիչ Վահան Թաւարբէկեանցին նոյն քաղաքի ս. Լուսաւորիչ եկեղեցուն սպասաւորելու։

Նոյն թուին թոյլատրուեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Ուղուզլի գիւղի բնակիչ Սմբատ Տէր Դրիգորեան Տէր Ստեփանեանցին և ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ։

Յուլիսի 1-ին Սինոդը լուծեց Ղազախի գաւառի Պիպիս գիւղի բնակիչ Յարութիւն Մելիք-Սարիբէկեանի և նեա Դաւթեանի պսակը վերջինիս անհաւատարմութեան պատճառով և թոյլատրեց Յարութիւնին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունել Կարսի վիճակի Մազրա գիւղի բնակիչ քիւրդ Կիւրեղ սու Սարգիս եղբայրներին։

Յուլիսի 4-ին Սինոդը լուծեց Ղազախի գաւառի Քարվանսարա գիւղի բնակիչ Գէորգ Սարգսեանի և Ոսկեհատ Ադամեանի պսակը՝ վերջինիս անհաւատարմութեան պատճառով և թոյլ տուաւ Գէորգ Սարգսեանին նորէն ամուսնանալ։

Յուլիսի 8-ին Սինոդը լուծեց Ատրախանցի Աւետիս Թաթուլեանի և Ոսկի Մինասեանի ամուսնութիւնը վերջինիս անհաւատարմութեան պատճառով և թոյլ տուաւ Աւետիսին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը լուծեց Արմաւիրի բնակչուհի Անուշ Բաղդասարեանի և Վարդան Խլղաթեանի պսակը վերջինիս անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուաւ Անուշին նորէն Ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Զխար գիւղի բնակիչ Սիմէոն Ղուրուլեանցին և նշանակել սպասաւոր Քութայիսի եկեղեցու։

Յուլիսի 11-ին Սինոդը լուծեց Կարսի վերաբնակիչ Սիմէոն Մարտիրոսեանի և Հերմոնիա Յարութիւնեանի պսակը Հերմոնիայի անհաւատարմութեան պատճառով և թոյլ տուաւ Սիմէոն Մարտիրոսեանին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Քարահունջ գիւղի բնակիչ Եւագր Տէր Սարգսեանին և ձեռնադրել նրան սարկաւագ նոյն տեղի եկեղեցուն սպասաւորելու համար։

Յուլիսի 15-ին Սինոդը թոյլատրեց Շամախու Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Ղալագէ գիւղի բնակիչներ Մովսէս Մկրտումեան Ստեփանեանցին և Սեդրակ Պետրոսեան Մայիլեանցին և ձեռնադրել նրանց քահանայ յիշեալ գիւղի վրայ։

Նոյն թուին թոյլատրուեց Վրաստանի և Իմերէթի վիճ. Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Ախալքալաքի գաւառի Ազաւրէթ գիւղի բնակիչ Կիրակոս Մարգարեան Գրիգորեանցին և ձեռնադրել նրան քահանայ Ալաթուման գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Երևանի Կոնսիստորիային յետ ուղարկել իւր ժողովրդի մօտ Ղութնի Ղշլաղ գիւղի ծխատէր Սիմէոն քահանայ Միրիմանեանցին, իսկ Գրիգոր քահանայ Տէր-Կարապետեանին թողնել Թովմարաշ։